ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Աշոտ Սերոբի Սաղյանը ծնվել է 1957 թ. ապրիլի 7-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Զափար գյուղում: 1978 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1980–1984 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտորգանական միացությունների ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում:

Ա. Սաղյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1985 թ., դոկտորականը՝ 1997 թ.: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Նրա գիտական գործունեության բնագավառներն են ստերեոսելեկտիվ կատալիզը, ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզը, բնական և կենսասինթետիկ խառնուրդներից կենսաակտիվ միացությունների անջատումը և մաքրումը: Շուրջ 350 գիտական հոդվածի, 2 դասագրքի, 2 մենագրության հեղինակ է: Ա. Սաղյանը 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար է:

Ա. Սաղյանն աշխատել է ԽՍՀՄ Բժշկական և մանրէաբանական արդյունաբերության նախարարության Գենետիկայի և սելեկցիայի համամիութենական ինստիտուտի Զարենցավանի մասնաճյուղում, այնուհետև՝ Ամինաթթուների գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտում, որը ԽՍՀՄ փլուզումից հետո վերանվանվել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում: 2000 թ. նշանակվել է ինստիտուտի տնօրեն: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն: Ա. Սաղյանը 1998 թ. աշխատում է նաև Երևանի պետական համալսարանում սկզբում որպես դեղագործական քիմիայի ամբիոնի դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր, իսկ 2003 թ՝ ամբիոնի վարիչ: 2016 թ. դեղագործական քիմիայի ամբիոնի հենքի վրա ստեղծվել է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ, որի տնօրենն է նշանակվել Ա. Սաղյանը:

Ա. Սաղյանը 2008 թ. ՀՀ ԳԱԱ «Հայաստանի քիմիական հանդես»-ի գլխավոր խմբագիրն է: ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչը ՄԳՏԿ-ի համակարգող խորհրդում, 2016 թ՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

2001 թ. Ա. Սաղյանն արժանացել է Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակի: 2002 թ. պարգևատրվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարական «Բարեկամություն» շքանշանով: 2004 և 2011

թթ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակների, 2009 թ.՝ ՀՀ վարչապետի հուշամեդալի: 2014 թ. ստացել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 2015 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 28-ին և 29-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը: Անցկացվեցին ՀՀ ԳԱԱ նախագահի, փոխնախագահի, ակադեմիկոս-քարտուղարի, բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և նախագահության անդամների ընտրությունները:

Հունիսի 28-ին ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում առաջադրվեց 3 թեկնածու՝ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, *ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս* Աշոտ Սաղյանը, *ակադեմիկոս* Էդուարդ Ղազարյանը: *Առաջին փուլում ոչ մի թեկնածու բավարար ձայն չհավաքեց: Երկրորդ փուլում 55 կողմ, 34 դեմ, 5 անվավեր ձայների հարաբերակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում ընտրվեց ակադեմիկոս* Աշոտ Սաղյանը:

Իր ելույթում ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահը խոսեց առաջիկա անելիքների մասին՝ մասնավորապես նշելով ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտահետազոտական ուղղությունների և մարդկային ներուժի օպտիմալացման, ռազմաարդյունաբերության ոլորտում գիտահետազոտական գործունեության արդիականացման, կիրառական բնույթի հետազոտությունների, համակարգի աշխատակիցների սոցիալական հարցերի հնարավոր լուծումների, միջազգային համագործակցության ընդլայնման, հայագիտության զարգացման խթանման, բուհական համակարգի հետ համագործակցության ընդլայնման, ԳԱԱ համակարգի ներուժի երիտասարդացման մասին:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ա. Սաղյանը ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում առաջադրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Հենրիկի Մաթևոսյանի թեկնածությունը: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում 80 կողմ, 12 դեմ ձայների հարաբերակցությամբ ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում ընտրվեց Հրանտ Մաթևոսյանը:

Հ. Մաթևոսյանը ծնվել է 1947 թ. հուլիսի 10-ին Երևանում: 1970 թ. ավարտել է ԵՊՀ-ի Ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացումը՝ պլազմայի ֆիզիկա: 1977 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան, 1997 թ.՝ դոկտորի: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: